

ՄԱՍԻՍ

ՀԱՆՔԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐԵԿՈՒԻ ՍՍԵՆ ԾԱՐԱԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԴՐԱՊԵՏ
ԴՐԻՎՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՅԱՆՈՐԴԱԳԻՆ

Պոլիս եւ Գաւառներ 40 Ղըուշ
Ռուսաստան 4 Բուլլի
Եւրոպա 10 Ֆրանք

ՀԱՍՏԵ

Ղալաբիա, Բզմիրլի Օղլու խան, րիւ 3-4

Այսօր մայիսի թիւէն կը քաղենք հետեւեալներն, ի շարս Սինոդի պաշտօնական օրագրութեանց:

Ապրիլ 14. Ս. Էջմիածնի վանական վարչութեան 31 թ. յայտարարութեան համեմատ՝ հրամայել Մայր Աթոռի Գանձապահին տալ 3000 ռուբլի Միաբաններին նոր շինուող սենեակներին համար, որ անցեալ ամիսներին ընթացքում ստացած 1000 ռուբլու հետ կանէ 4000 ռուբլի. եւ Ապրիլ ամսին ընթացքում Մայր Աթոռի, Ճեմարանի եւ Տպարանի ծախսեց համար տալ 7000 ռուբլի, որ անցեալ ամիսներին ընթացքում ստացած 21,000 ռուբլու հետ կանէ 28,000 ռուբլի:

— Ապրիլ 14. Պատուիրել Երեւանի Հայոց Կոնսիստորիային՝ առնել Տիգրան Նաւարդեանից եկեղեցական վիճական եւ Լալումաւական գործ րիւ ու յանձնել Մայր Աթոռի փառաբան Պ. Ռոբէն Հասան Զաղաբեանցին նախկին պաշտօններով:

— Ապրիլ 16. Երեւանի Հայոց Կոնսիստորիային՝ դադարացնել քաւանայագործութիւնից Օրդուբադի Ղեւոնդ քահանային վեց ամիս ժամանակաւ, կարգադրելով ժողովրդի տուրքի մի երրորդական մասն

տալ հովու պահանային եւ երկու երրորդականն՝ արգելուած քահանայի ընտանեացն իբր սնունդ:

— Ապրիլ 1. Վանական վարչութեան 11 Մարտի տարւոյս թ. 15 յայտարարութիւնն ի նկատի առնելով Սինոդը, հրամայեց Մայր Աթոռի Գանձապահին տալ 7088 ռ. 95 կոպ. անցեալ 1892 թուի վանական վարչութեան թողած պարտքերը վճարելու, որոնք ցարգ չեն վճարած:

— Ապրիլ 21. Որովհետեւ Տիգրանի Հայոց Կոնսիստորիայի արած քննութեան համեմատ չէ ստուգւում Դրիգոր քահ. Խոջանեանիցի Ղեւոնդ աւագ քահ. Խաւրդեանցին անարգ խօսքերով արհամարհելն, ուստի ազատ թողնել նորան յանգիմանութիւնից յիսուն ռուբլի տուգանքից:

— Ապրիլ 21. Ըստ յայտարարութեան Գեր. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի՝ նշանակել նորան վանահայր Ս. Շողակաթ վանքի ցմահ, տալով Մայր Աթոռից միայն երկու ծառաների սնունդ երեք ամիս ժամանակ, վանքում սնունդի համար ոչինչ լինելու պատճառաւ:

— Ապրիլ 21. Հրամայել Երեւանի Հայոց Կոնսիստորիային թոյլ տալ Աղէքսանդրա-

պօլցի խորովիւթիս Գաբրիէլեանցին մըտնել նոր ամուսնութիւն , իւր այր Մկրտիչ Զահրիեանցի անդարձ արտօսուելու պատճառաւ :

—Ապրիլ 30. Հրամայել բոլոր Հայոց կոնսիստորիաներին կազմել ճիշդ ցուցակ ընդհանուր Հայ հոգեւորականներին , քահանայից , սարկաւազաց և ստորին եկեղեցականներին , որոնք օրինական կարգով ազատուած են հարկից և ընդունուած հոգեւոր կոչման մէջ . ցուցակները լինելու են երկու օրինակ , մինը իւրեանց գործերի մէջ պահելու և միւսը Սինոդին ուղարկելու մինչեւ Նոյեմբեր 15 :

Տնտեսական խորհուրդն այս չորեքշաբթի օր իւր սովորական նիստը կազմեց ի խորհրդարանի Ղալաթիոյ և զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով :

Էթ Մէյտանիի ազգ . վարժարանի պարտուց և նորոգութեան խնդրոց համար Հոգաբարձութիւնն հրաւիրուած ըլլալով ներկայացաւ և յետ խորհրդակցութեան որոշուեցաւ հանգանակութեան ժապաւինեալ տումար մը յանձնել որպէսզի բարեպաշտ ազգայնոց նպաստից զիմեւով կատարէ վարժարանի նորոգութիւնն և վճարէ պարտքը :

խորհուրդն երկուրորոց Տեսուչ Զօպանեան Միհրան էֆէնտիէ տեղեկանալով որ Մագպուլեան Համբարձում էֆէնտի նախընթաց նստի որոշման համաձայն Պատրիարքարանի աւանդից . արկեղ յանձնած է Ֆէրիզիւղի Տաճատեան կաղնալուծեալ ընկերութեան որուն գանձապետը կը գտնուի՝ դրամը , արժէթուղթերը , կալուածադրերն ու այլ գոյքերը , նկատողութեան առաւ այս առթիւ յիշեալ ընկերութեան հաշուեմատեանեանները , և Մագպուլեան էֆէնտիի 32 տարիներէ ի վեր բարւոք տնտեսութեամբ և գովելի աշխատութեամբ տարած գանձապետութեան պաշտօնն , գոհունակութեան արժանի գտաւ և իւր շնորհակալութիւնը յայտնեց :

Մայր եկեղեցւոյ թաղական խորհուրդն յայտադրով մը առաջարկած էր եկեղեցւոյ վագֆէն գտնուած տուն մը վաճառել և ա՛նոր արդիւնքը սոկոսատոր պարտուց յատ-

կացնել : խորհուրդը նկատելով որ վարչական որոշմամբ արգիւտած է ազգ. հաստատութեանց՝ իրենց վագֆին վերաբերող կալուածն իբր եկամուտ պահել , որոշեց արտօնել յիշեալ թաղական խորհուրդը աճուրդի գործողութիւնը կատարել և արդիւնքը տեղեկագրել , որպէս զի յետ օրինական քննութեան արտօնուի վաճառումը :

Գանտիլլիի Ս . Առաքելոց եկեղեցւոյ գոյքերը ասկից առաջ վարչական որոշմամբ փոխադրուած էին ի Մայր եկեղեցի : Այս անգամ թաղական խորհուրդը յայտնելով որ եկեղեցւոյ վերալինութիւնն աւարտած է և ի մօտոյ օժումը պիտի կատարուի , խնդրած էր նոյն գոյքերը վերադարձնել : խորհուրդն որոշեց գրել Մայր եկեղեցւոյ թաղական խորհրդոյ՝ նոյն գոյքերը յանձնել Գանտիլլիի թաղական խորհրդոյ :

Տիվրիկի կալուածոց հոգաբարձութեան երմտացոյցի ուսումնական մասին Ուսումնական խորհուրդն իւր քննութիւնը կատարած և իւր կարծիքը յայտադրած ըլլալով , խորհուրդն ի քնին առաւ յիշեալ երմտացոյցն ու հոգաբարձութեան կանոնագիրն և բանաւոր համարեց որ հոգաբարձութեան ընդհանուր հաստից հարիւրն տասը ի պահ դրուի կալուածոց գրնման յատկացուելու համար : Նոյնպէս օրինական ծախքերն ընելէ յետոյ մնացեալն ամբողջովին տեղւոյն վարժարանի մատակարարութեան յատկացնէ : խորհուրդը՝ կանոնագրոյ ինչ ինչ յօդուածոց բարեփոխման պէտք տեսնելով , որոշեց ըստ այնմ յայտադրել վարչութեան :

Կէտիկ Փաշաի թաղային տրոց խնդրոյն նկատմամբ վարչութեան պաշտօնագրերը կարգացուելով , որոշուեցաւ թաղական խորհուրդն հրաւիրել յաջորդ նստին ի խորհրդակցութիւն :

Սամաթիոյ Նոր թաղի Ս . Ներսէսեան ընկերութեան հաշիւները զրկուած ըլլալով յանձնուեցան կեդրոնական համարակալութեան ի քննութիւն :

Մաքրիզիւղի եկեղեցւոյ հաշւոց մասին մատուցուած տեղեկագիրն ուշադրութեան առնուելով՝ յանձնուեցաւ կեդրոնական համարակալութեան ի քննութիւն :

Որոշուեցաւ յաջորդ նստին զբաղի Ազգ . Հիւանդանոցի երմտացոյցի խնդրովը :

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Է Զ Ե Ր

ԿՅՂԱՅԻՆ ԹՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Շատ կը փափագիմ որ ձեզի թուաբանութեան գիրք մը գրեմ:

Աղէկ հասկցա՞ք, թուաբանութեան գիրք մը, այսինքն այնպիսի թուաբանութիւն մը որ ձեզի համար է, դասագիրք չէ. այնպիսի թուաբանութիւն մը որ համով է, ընթերցման ախորժելի, զբօսեցուցիչ, ընկերական թուաբանութիւն մը, սալօնի թուաբանութիւն մը, գրական թուաբանութիւն մը, բանաստեղծական, երեւակայութեամբ լեցուն թուաբանութիւն մը:

Մի ծիծաղիք, իրաւ է ըսածս: Կրնամ իսկ ոտանաւորի վերածել թուաբանութիւնս, բայց կը վախնամ. ամեն չափերու վստահ եմ, բացի տաղաչափութենէ:

Ջանամ համոզել զձեզ:

Մոռցէք այն չոր ու ցամաք թուաբանութիւնը զոր վարժարանին մէջ սորվեցուցին ձեզի, այն անհամ թուաբանութիւնը որ ձեզմէ շատերուն պատճառեղաւ գիտութիւնները ձանձրանալի նըկատելու և գրական ասպարէզը գրկելու, այն թուաբանութիւնը զոր գրամատեարք ու վաճառականք կը գործածեն: Մոռցէք երեքի կանոնը, չլթայի կանոնը, ընկերութեան կանոնը, ևլն. ևլն. — յօդուած էս վերջ. վերստին յիշելու պայմանաւ — և քիչ մը հետո՝ ելէք:

Իմ թուաբանութիւնս այնպէս է որ լրագրի մէջ առաջարկուած խնդիր մը, կամ վարպետորդի մը կողմէ սրուած չուարեցուցիչ հաշիւ մը, կամ թղթախաղի ամեն կերպ գիպուածակա՞ն, չարքերու նախատեսումն, վերջապէս նոր նոր բաներ ինչպէս հետաքրքրաշարժ ին ձեզի համար, նոյնչափ հետաքրքրաշարժ պիտի ըլլայ: Ձեզի կարգ մը խաղեր պիտի սովորեցնէ, կարգ մը գիտարութիւններ պիտի գիւրացնէ, և եթէ այս խոտոտմներս չգահեմ այն զրբին մէջ, թող արժանան՝ մ ձեր արդար ցասման:

Իմ թուաբանութիւնս գրական և բանաստեղծական չըլլա՞ր եթէ, անոր մէջ խօսիմ կարելի թիւերու վրայ, շէրքաշա՞կ և անէրքաշա՞կ համեմատութեանց վրայ, երեւոյթական թիւերու վրայ:

ԿԱՏԱՐԵԱԼ ԹԻՒՐ ԳԻՏԵՔ ոյն է:

Եթէ թիւ մը այն պէս է որ իւր բաժանարարներու գումարին հաւասար է, այսինքն նոյն թիւը ճշդիւ բաժնելու կարող բոլոր թիւերը գումարելով՝ եթէ զայն կը գտնենք, այն թիւը կատարեալ է:

Օրինակի համար, 6 թիւը կատարեալ է, ինչու որ 6 թիւը ճշդիւ կը բաժնուի 1ով, 2ով և 3ով և ասոնց գումարն է 6:

28 թիւն ալ կատարեալ թիւ է, ինչու որ 28 թիւը կրնայ բաժնուիլ 1ով, 2ով, 4ով, 7ով և 14ով, ասոնց գումարն ալ 28 կ'ընէ:

Կրնա՞ք գտնել ասանկ ուրիշ թիւեր, փնտռեցէք: Ես 496ը գիտեմ, 8128 թիւն ալ ասանկ է: Ասոնց նման ուրիշներ ալ կրնա՞ք գտնել: Զիտ շնորհապարտ կ'ընէք, նմանապէս շնորհապարտ կ'ընէք զՖէռմա, աշխարհիս վրայ մինչեւ ցարգ եկած թուաբաններուն ամենէն զօրաւորը, զՏէքառթ որ Ֆէռմայի կը գրէր թէ՛ եթէ զիտէ իրեն հազարդէ, և մինչեւ իսկ զԵւքլիտէս, այս Եւքլիտէս, որ հազարաւոր տարիներ առաջ այն կատարեալ թիւերով զբաղեցաւ. վերոյիշեալները իւր գտածներն են: Զարմանալին այն է որ 8128էն վերջ կան, բայց միլիոնաւոր են այդ թիւերը և ապացոյց ալ չկայ թէ մեր գիտցածներէն տարբեր կատարեալ թիւերու գոյութիւնն անկարելի ըլլայ:

ՆԵՐԴԱՇՆԱԿ ԹԻՒՆԵՐԸ կը հարցնէք: Աւասիկ,

$$\frac{1}{1}, \frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{1}{4}, \frac{1}{5}, \dots$$

ամենապարզ ներդաշնակ շարք մը ի մէջ այլոց: Այս անունը շատ հին է: Լէյպնից ալ թիւերով եռանկիւն կապեց և անունը դրաւ ներդաշնակ եռանկիւն: Ինչո՞ւ համար ներդաշնակ, և ի՞նչ բանի կը ծառայէ այս յատկութիւնը: Եթէ այդ գիրքը գրեմ, անոր մէջ կը կարգաք:

ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ թիւեր ալ ունինք:

Օրինակի համար դուք քանի՞ հատ թիւ գիտէք որ երեք անգամ ինքնիրմով բազմապատկելով 64 ելլէ: 4 թիւը այնպէս չէ:

$$4 \times 4 \times 4 = 64$$

Ուրիշ կայ, փնտռեցէք: Եւ 4էն զատ երկու հատ թիւեր ալ գիտեմ: Ասոնք երեւակայութեանս մէջ են, երեւակայական են, թղթին վրայ չեն գրուիր, բայց կան, և անոնց վրայ հետաքրքրաշարժ գործողութիւններ կրնանք կատարել և պատրաստ էի այս տեղ կատարելու, եթէ աւելի հետաքրքրաշարժ ըսելիքներ չունենայի:

Դեռ շատ ասանկ բաներու վրայ պիտի խօսիմ այդ թուաբանութեանս մէջ: Բայց մասնաւորապէս պիտի երկարաբանեմ կարգ մը զբօսալից թուոց յատկութեանց վրայ, որոնք պիտի արդարացնեն այն խօսքս թէ սալօնի թուաբանութիւն է:

Այն տեղ պիտի տեսնէք թէ ինչպէս կըրնաք անմիջապէս երեւան հանել իր գաղտնիքը, երբ մէկը ձեզի ըսէ—թիւ մը միաքիւլահէ, զայն 2ով, 3ով, 5ով և 7ով բաժնէ, մնացորդները միայն ըսէ, այդ թիւը պիտի գտնեմ—Ձէ թէ միայն կանխաւ պիտի գիտնաք անոր ի գործ դրած միջոցը, այլ նաեւ զինքը չփոթեցնելու, իւր հաշիւները խանգարելու կարող թիւեր միտքերնիդ պիտի պահէք:

Եւ դուք ալ իրեն փոխադարձաբար հետեւալը պիտի առաջարկէք, որ ապահովապէս չգիտեր, ինչու որ ես տեղ մը հանդիպած չեմ և կը կարծեմ ես գտած ըլլալ:

—Թիւ մը ա՛ռ, 2ով, 5ով և 11ով բաժնէ, մնացորդները ըսէ և թիւդ պիտի ըսեմ:

Դիցուք թէ 2ով 1 մնայ, 5ով 4 մնայ, 11ով 7 մնայ: Այդ թիւն է 29: Ի՞նչպէս: Ահաւասիկ գտնելու միջոցը:

Նախ փնտռեցի թէ ո՞ր միաւոր թիւն է որ 5ով 4 մնացորդ կուտայ. կամ 4 և կամ 9, այնպէս չէ: Ասոնց մէկը զոյգ է, միւսը անզոյգ, ապա ուրեմն 9 է խնդրուած թիւին միաւորը, քանի որ 2ով պարտի 1 մնացորդ տալ: Երբ 9ը գտայ, 7ը՝ որ 11ով մնացորդն էր՝ հանեցի 9էն և մնաց 2, ուրեմն 2 տասնաւորն ալ գտայ և եղաւ 29:

ԿԱՆՈՆ. — Երբ թուոյ մը 2ով, 5ով, և 11ով բաժանման մնացորդները ծանօթ են, այն թիւը կրնանք գտնել հետեւեալ կերպով: 2ով և 5ով մնացորդները կուտան միաւորներու թուանշանը, և այդ թուանշանէն հանելով 11ով մնացորդը տարբերութիւնը իբր տասնաւոր կը գրենք: (Եթէ 11ով մնացորդը գտնուած միաւորներու թուանշանէն մեծ է, և անկէ չէք կըրնար հանել, այն ատեն վրան 11 գումարելէ վերջ հանեցէք և կ'ըլլայ:)

Օրինակ. Ո՞ր թիւն է որ 2ով 1 կուտայ և 5ով ալ 1 կուտայ և 11ով 9: Միաւորը պարտի 1 ըլլալ, այս՝ դիւրին է: Հիմա, գտնուած 1էն 9ը չելլար, ուրեմն 1ին վրայ 11 կ'աւելցունեմ կ'ըլլայ 12, 12էն 9 ելլէ կը մնայ 3, ուրեմն խնդրուած թիւն է 31:

Բայց այս խնդրոյն մէջ կէտ մը կայ զոր պէտք չէ մոռնալ: Երբ թուոյ մը վրայ աւելցնեմ $2 \times 5 \times 11$ այսինքն 110, որ իմ բաժանարարներու բազմապատիկն է, անով մնացորդները չեն փոխուիր: Այնպէս որ 31ին վրայ եթէ աւելցնեմ 110, կ'ըլլայ 141 որ դարձեալ 2ով, 5ով և 11ով նոյն մնացորդները կուտայ: Նմանապէս 251, 361, 471..... թիւերը: Այս պայմաններու մէջ, եթէ ընդգրկախօս վարպետ է, այս թիւերէն մէկը միտքը կը պահէ, և ես որ «31» պատասխանեցի իրեն, «չեղաւ» պիտի ըսէ խղճի մտօք: Այս անպատեհութեան առաջքը առնելու համար կրնամ պայման դնել կանխաւ, որ 100է փոքր պիտի ըլլայ բռնած թիւը: Եւ որպէսզի զինքը չփոթեցունեմ, երկրորդ անգամ մը, պայման կը դնեմ որ 100ի և 200ի մէջտեղ ըլլայ բռնած թիւը, և այսպէս ամեն անգամ սահմանները փոխելով աւելի կը չուարեցնեմ:

Ասոր նման շատ խաղեր ունիմ և կըրնամ յանհունս փոփոխել:

Մասնիկն խաղը գիտէք անշուշտ. սենեակին մէջ գտնուած տասը անձանց որի՞ն, ո՞ր ձեռքին, ո՞ր մատին, ո՞ր վաղանգին վրայ է մատնին, գտնել մէկ թիւ մը հարցունելով: Դժուար չէ, բայց նոր ալ չէ, անոր համար կ'անցնիմ:

Հիմա ես ձեզի խաղ մը ընեմ :
Թիւ մը պահեցէք միտքերնիդ :
Վրան 6 աւելցուցէք :
Երկուքով բազմապատկեցէք :
Վրան 7 աւելցուցէք :
Հինգով բազմապատկեցէք :
Ձեր մտադրած թուոյն տասնապատիկը հանեցէք :

95 չմնաց :

Ի՞նչպէս գտայ : Եթէ բազմաթիւ ան-
ձինք այս գործողութիւնը կատարեցին
տարբեր թիւեր միտքերնին պահելով՝ նա-
խադրեալ զուգադիպութեամբ մը ամենքն
ալ 95 գտան : Ըսեմ գաղտնիքը : Այն ա-
մեն գործողութիւնները զորս ձեզի կա-
տարել տուի , ես ալ կատարեցի իմ ա-
ւելցնել տուած թուոյս վրայ , ե այս
թիւերս , 6ը 7ը կրնայի փոփոխել , այն-
պէս որ երկրորդ անգամ 6ին տեղ 50 ըսել ,
7ին տեղ 18 եւն . միշտ վստահ ըլլալով
թէ մնացորդն իմ գտածս պիտի ըլլայ :
Ամեն պարագայի , փոխանակ 95ի՝ տարբեր
մնացորդներ թողլով պիտի շուարեցնէ զձեզ
իմ գտնելուս եղանակին վրայ :

* * *

Մոգական քառակուսիները լսած էք :
Գրել կարգ մը թիւեր , Պիւթագորեան
ադիւնակի ձեւով , այնպէս որ ամեն կող-
մէն թէ՛ սիւնակ առ սիւնակ , թէ տող առ
տող , միշտ մի ե նոյն գումարը տայ :
Օրինակի համար
16 հատ թիւերով կազմել մոգական
քառակուսի մը :
Աւասիկ օրինակներ .

6, 11, 10, 9	3, 26, 20, 17
11, 8, 9, 8	և կամ 25, 12, 18, 11
10, 9, 10, 7	22, 15, 21, 8
9, 8, 7, 12	16, 13, 7, 30

առաջինը ամեն կողմէն , ինչպէս նաեւ
որամանկիւններէն , միշտ 36 կուտայ ,
երկրորդը՝ 66 . երկրորդը առաջնոյն վրայ
սա առաւելութիւնն ունի որ թուոց մէջ
բնաւ կրկնութիւնք չկան : Ահաւասիկ եր-
րորդ մ'ալ որ 1էն մինչեւ 16 առանց բա-
ցառութեան բոլոր թիւերը կը պարու-
նակէ

1, 15, 8, 10
12, 6, 13, 3
14, 4, 11, 5
7, 9, 2, 16

ամենքն ալ մէկ անգամ միայն ե ամեն
կողմէն 34 կը գումարուի . կրնա՞ք կաղ-
մել ասոնց նմանները : Ահաւասիկ ուրիշ
մ'ալ զոր 1000աւոր թիւերով շինեցի .

1010, 35, 301, 3050
3001, 350, 1032, 13
82, 11, 3003, 1300
303, 4000, 60, 33

Ո՞վ կրնայ ինձ քառակուսի մը կաղ-
մել որ ամեն կողմէն 99 գայ , առանց մի
և նոյն թիւը կրկնելու մի և նոյն քառա-
կուսիին մէջ : Կանոն ունիմ այս քառա-
կուսիները շինելու , հոչակաւոր Ֆէռմայի
գտած կանոնը , զոր առ այժմ ինձ կը վե-
րապահեմ ե օրին մէկը ձեզի ալ կը հա-
ղորդեմ , եթէ զձեզ հանրահաշուական գոր-
ծողութիւններէ վախցնելէ չի վախնամ :

Արդէն , փոխանակ 16 թիւի , 9, 25, 64,
81, 100 ե առաւել թիւերով ալ քառա-
կուսիներ կրնանք շինել : Որչափ կ'ուզէք ,
կրնամ շինել մոգական քառակուսի , բայց
հոս տեղը չէ , արդէն բացատրութիւններս
այնքան երկար են որ ամբողջ Մասիւր մո-
գական քառակուսի կը դարձնեմ , եթէ
փորձեմ բացատրել :

Ուրիշ խնդիր մը :

Մարգուն մէկը քառասուն հոխանոց
քար մը գտաւ : Այդ քարը չորս մասն
կտորներու վերածել կուզէ , այնպէս որ ,
այդ կտորներով կարենայ ամեն բան կըշ-
ռել մէկէն մինչեւ քառասուն հոխայ .
ի՞նչպէս վերածելու է :

Խնդիրը այն է թէ , գտնաւ պէտք է
չորս թիւեր , որոց գումարն ըլլայ քառա-
սուն , ե իրարու վրայ աւելցնելով կամ
իրարմէ հանելով՝ կարելի ըլլայ կազմել ա-
մեն թիւ մինչեւ քառասուն :

Կապացուցուի թէ այս թիւերը պարտին
երկաւաճական քառասունութիւն մը կազմել :
(Ներեցէք , պէտք չէ որ այս քառերը
գործածէի) . այս թիւերն են

1, 3, 9, 27

որոնց ամեն մէկը նախորդը 3ով բազմա-

պատկերով կելլէ : Հիմա , եթէ ուզենք կազմել 25 հոխա , կշտորդին մէկ նժարին մէջ կը դնենք 27 և 1 հոխանոց կտորները որք միասին կը կշտեն 28 հոխա և միւս նժարին մէջ կշտելի մարմնով 3 հոխանոց կտորը :

Պէտք է դիտել թէ կանոնը ընդհանուր է , այսինքն եթէ շարունակենք , հինգ կտոր կշտենք ունենալով

1, 3, 9, 27, 81

կրնանք կշտել մինչեւ 121 հոխայ , նմանապէս եզր մ'ալ աւելցունելով կունենանք 243 հոխանոց կտոր մը , որով մինչեւ 364 ամեն թիւ կրնայ կազմուիլ եւն :

Եթէ առնենք տարբեր յառաջատուութիւն մը , զոր օրինակ

1, 2, 4, 8, 16, 32

այս վեց թիւերով 1էն մինչեւ 63 ամեն թիւ կրնանք կազմել :

Արդէն մեր տասնորդական գրութիւնը որ կը կազմուի տասներով , այսինքն

1, 10, 100, 1000, եւն

միթէ այսպէս չէ : Եւ անոր համար է որ տասը հատ թուանշաններով ամեն թիւ կրնանք կազմել :

Վերջին օրինակս , այսինքն 1, 2, 4, 8, 16 եւն . շարքը գեղեցիկ խաղ մը կը սովորեցնէ մեզի , այն է խոհրդաւոր հովաճարը (l'éventail mystérieux) : Թուաբան մը , սալօնի թուաբան մը , խոնարհաբար կը խնդրէ որ տիկին մը վայրկեան մը իրեն փոխ տայ իւր հովաճարը : Անոր թեւերուն վարի մասերուն վրայ շաղ մը թիւեր կը գրէ , և կ'ըսէ ներկայից .

— Այս դրած թիւերէս միտքով հատ մը ընտրեցէք , և ըսէք թէ ո՛ր շերտերուն վրայ է , անմիջապէս պիտի գտնեմ ձեր ընտրած թիւը : Եւ արդարեւ կը գտնէ :

Օրինակի համար : Հովաճարը պարզ սիւներու վերածելով գրենք .

Ա	Բ	Գ	Դ	Ե
1	2	4	8	16
3	3	5	9	17
5	6	6	10	18
7	7	7	11	19
9	10	12	12	20
11	11	13	13	21
13	14	14	14	22
15	15	15	15	23
17	18	20	24	24
19	19	1	25	25
21	22	22	26	26
23	23	23	27	27
25	26	28	28	28
27	27	29	29	29
29	30	30	30	30
31	31	31	31	31

Հիմա ընտրեցէք թիւ մը . զոր օրինակ 23 թիւը , Ա, Բ, Գ, Ե սիւնակներուն մէջ միայն կայ : Եթէ ըսէք ինձ թէ ձեր ընտրած թիւը Ա, Բ, Գ, և Ե սիւնակներուն մէջ միայն կայ , անմիջապէս պիտի ըսեմ թէ 23 է : Եթէ ձեր ընտրած թիւը Բ, Գ, Դ սիւնակներուն մէջ է , 14 պարտի ըլլալը Եթէ Ա և Ե ին մէջ է՝ 17 է եւն :

Տեսէք ինչպէս կը գտնեմ :

Ինձ համար Աը 1 է , Բը 2, Գը 4, Դ գիրը 8 և Եը 16 : Արդ , երբ թիւ մը ընտրէք և ըսէք թէ , օրինակի համար , Ա.ին , Դ.ին և Ե.ին մէջ կայ , ես կը գումարեմ իրենց համապատասխանող թիւերը , 1, 8 և 16, որ կ'ընէ 25 և կ'ըսեմ , առանց վերան նայելու , թէ 25 ընտրած էք :

Աւելի խորհրդաւոր ըլլալու համար , այս սիւնակներուն մէջ գրուած թիւերը , (սիւնակներ զոր կրնաք երկարել և թիւն ալ ըստ այնմ աւելցնել) մասնաւոր թուգթերու վրայ կ'արձանագրէք , անշատ ցանկեր կազմելով : Ապա , կ'ըսէք մէկուն , —Միտքդ թիւ մը դիր— : Եւ հետզհետէ կը ներկայացնէք իրեն այդ ցանկերը , ամեն անգամ հարցնելով թէ կա՞յ ատոր մէջ , նա ա՛յո՛ կամ ո՛չ ով պիտի պատասխանէ ձեզ , և այսչափը պիտի բաւէ որ միտքը դրած թիւը գտնէք առանց վարանման : Միայն պէտք է որ պայման մը դնէք , այն է ձեր սիւնակներուն սահմանէն դուրս թիւ չընտրել . եթէ իմ տուածներս ըլլան՝ 31էն անդին չեն ծառայեր : Բայց , ինչպէս որ ըսի , կրնաք յանհունա երկարել այդ սիւնակները :

* * *

Կարծեմ թէ բաւական բաներ գրեցի , որոնք գաղափար մը կրնան տալ թէ ի՞նչ պիտի ըլլայ իմ ըսած թուաբանութիւնս : Ասիկայ սովորականէն շատ տարբեր , և ըսեմ , տեղ տեղ աւելի դժուար պիտի ըլլայ , բայց ձեր գործը ապացուցութեանց , խորունկ պատճառաբանութեանց հետ չէ , արդիւնքը կ'ուզէք , կանոնը կը հարցնէր , այն ալ շատ անգամ կրնայ տրուիլ :

Շատ կը միափազէի այս տեղ նմոյշներ տալ մի քանի հետաքրքրաշարժ խնդրոց : Օրինակի համար Տարիքին խնդիրը : այ-

սիրքն ձեզմէ թիւ մը միայն հարցնելով
զտնել թէ քանի՞ տարեկան էք, ո՞ր տա-
րին ծնած էք, ո՞ր ամիս ծնած էք, եւ
ամսոյն քանի՞երորդ օրը ծնած էք: Դատա-
ւորին խնդիրը, բաժանարարին խնդիրը,
արձանին խնդիրը, ոտքի վրայ կենալու
խնդիրը, պանիրին խնդիրը...

Բայց չեմ դիմանար, պանիրին խնդիրը
ըսեմ:

Օրին մէկը հարուստ ազնուականի մը
որդին որսի կ'երթայ: Հրացանը ուսը,
լեռնէ լեռ, անտառէ անտառ, կը շրջի,
կը թափառի, ոչինչ կրնայ որսալ եւ վեր-
ջապէս յոգնած, դադրած, անտառի մը
մէջ կը կորսնցունէ ճամբան: Ո՞ր երթայ,
ո՞ր կողմէն դուրս ելնէ, չգիտեր. ժա-
մերը կ'անցնին եւ կ'անօթեանայ: Գրպանը
չափ ոսկի՝ բայց չիք ճաշարան:

Յանկարծ կը տեսնէ սխալաբաց խումբ
մը եւ երկու հովիւներ որք դէմ առ դէմ
կը նստին նախաճաշի պատրաստութեամբ:
Կը մօտենայ իրենց, եւ ամենայն հիւրա-
սիրութեամբ կը հրաւիրեն թափառական
որսորդը որ մասնակից ըլլայ իրենց ճա-
շին, 8 կտոր պանիր եւ հաց: Երեքը միա-
սին փառաւորապէս կը ճաշեն եւ մեր որ-
սորդը, որ շատ քիչ անգամ այսքան ա-
խորժակով սեղան նստած էր, նա մա-
նաւանդ թափառական այս անակնկալ
զուգարկալութենէն յոյժ գոհ, 8 լիւրա կը
նետէ իւր սեղանակիցներուն եւ կ'առնէ
կը քալէ: Պիտի կարծէք թէ նորապէս է
գրածս:

Մեր երկու հովիւները, որք շատ քիչ ան-
գամ մէկ լիւրայի հանդիպած էին, ուրիշ
լիւրայէն կը շնանն եւ երախտագիտական
սրտայոյզ արտայայտութենէ վերջ, ան-
տարակոյս զարմանալով որ գրպանը դրա-
մով լեցուն ինչպէս լեռնէ լեռ շրջելու
յանդգնութիւն ունեցողներ կան՝ այս
ահագին գումարը կուզեն բաժնել իրենց
մէջ:

Ի՞նչպէս բաժնեն: Խնդիրը հոս է:

Պզտիկ հովիւը մեծին կ'ըսէ, — Ուրիշ
լիւրա տուաւ, չորսը ինծի, չորսը քեզի:
Ահաւասիկ արգար բաշխում մը:

— Զրլար, կըսէ մեծը պզտիկին, ուրիշ
կտոր պանիր ունէինք, 5 կտոր եւ տուի

3 կտոր դուն, ուրեմն 8 լիւրայէն 5 լիւրան
ես կ'առնեմ եւ 3 լիւրան դու: Արգարու-
թիւնը այսպէս չէ: Եւ քիչ մը մտածելէ
վերջ.

— Ներէ, բարեկամ, կը շարունակէ,
սխալեցայ, եթէ պանիրները խնդրոյն
մէջ պիտի մտցնենք, ապա ուրեմն պա-
նիրով հաշուենք: Դիցուք թէ մէկ կտոր
պանիրը 3 մասի բաժնենք, դու բերիր
3 կտոր որ կընէ 9 մաս, ես 5 կտոր որ
կընէ 15 մաս: Ընդ ամենը 24 մաս, զոր
երեք հոգի ճաշակեցինք: Ըսելէ ուղիական
մաս կերանք, դու 9 մասերէն 8ը կերար
մէկը տուիր, ես 15 մասերէս 8ը կերայ
7ը տուի, ուրեմն դու մէկ լիւրա կ'առնես
եւ 7 լիւրա: Ահաւասիկ ճշմարիտ լուծումը:

Այս վէճը, կրնանք դուշտի՞լ որ չվեր-
ջացաւ դիւրութեամբ: Ելան գնացին քա-
ղաք եւ հոն դիմեցին նշանաւոր փաստա-
բանի մը, որ խոստացաւ հաշտարար կեր-
պով կարգադրել:

— Բերէ՛ք ուրիշ լիւրան, ըսաւ, եւ երբ
ափին մէջ մի առ մի համբեցին, կանչեց
իւր գրագիրը, ու հրամայական ձեռով,
ա՛ռ սա մէկ լիւրան, տար աւրել տուր,
մէջէն վճարէ՛ այս հովիւներուն պանիրին
գինը, նպարավաճառին գիներուն համա-
ձայն, եւ մնացորդը քեզի պահէ ամսակա-
նիդ ի հաշիւ: Իսկ 7 լիւրան իմ քով պիտի
մնայ փոխարէն իմ աշխատութեանս (1):

Այս լուծումը ի՞նչպէս կը գտնէք:

Յ. ԵՌԻՍՈՒՖԵԱՆ

(1) Այս խնդիրը՝ Պ. Է. Լիւրա, Փաղիգի Լիւի
Սէն Լուիի նշանաւոր դասախօսներէն մին, ներ-
կայացուց չափազանցութեան վրայ բանախօսու-
թեան մը մէջ: Պ. Լիւրա այժմ մեռած է:

ԲԱՑԱԿԱՆ

Իմ աչքերէս փախեր է քուն . . .
 Նոր կը բացուի դռնակն այգուն ,
 Ու պատառուն ամպոց մէջէն
 Վարդի խուրձեր կը բողբոջեն :

Հոս հորիզոնը կարմրի ,
 Հոն լուսնկան կը մարմըրի .
 Բիւր ագամանդ շողեր՝ կարծես
 Կը բեկբեկեն ծովուն երես :

Լերանց մէջքին կապոյտ գօտի
 Լայն ծալքերով կը փոթփոթի .
 Խօլ ձևերով՝ դաշտին վըրայ
 Շուքն երկարի ծառոց հսկայ :

Ճըլվումներով՝ թփոց տակէն
 Սարեկներն ալ դուրս կը ցատկեն . . .
 Բայց ի՞նչ փոյթ ինձ լոյս և շողեր ,
 Սիրարս յուզեն վախ ու գողեր :

Զեփուռին շունչ ու ծաղկանց բոյր
 Ալ ինձ համար չունին հրապոյր .
 Սարեկներուն հրճուանքն ի՞նչ փոյթ ,
 Զուարթ երգերն ինձ տան ձանձրոյթ :

Զի միտքս իրմով միշտ զբաղի
 Ու կուլ կուտամ արցունք աղի .
 Ո՛հ կարօ՛ւր՝ փուշ մ'է թաքուն ,
 Իմ աչքերէս փախեր է քուն :

Մ. ԱՃԷՄԵԱՆ

4 Յունիս 93

ԴՈՒՐԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

ԵՒ ԻՐ ՆԱԽԲԻՉԸ

Մէկ, մէկ այցելու, կին մը , որ Բե-
 րայէն կ'ելլէ յատկապէս և շարքը օր մը
 կուգայ կը մտնէ անոնց սենեակը , կը
 տեսնէ, կը խօսի, կը սփոփէ քիչ մը , եւ
 յետոյ կը մեկնի՝ բազմոցին վրայ թողած
 պղտիկ նպաստ մը, որ Աւետարանի գան-
 ձանակին մէջ նետուած քիչին արժէքն
 ունի : Ոչ ազգական է՝ ատ կինը և ոչ դը-
 րացի : Նժդէհուիւնը ծանօթացուցած է
 զիրենք իրարու , և ատ պարագան է մի-
 այն որ, մարդասիրութեան հետ, Վըղրդէ
 կինը գալ ամեն շաբթու իր օրին և եր-
 կուքը տեսնել :

Ատ կնոջ հրաւերովը, բան մը չգիտցած ,
 կը մտնէմ յանկարծ՝ ատոնց սենեակը ,
 մէկ յարկի վրայ խեղճուկ պատնարան
 մը, մայր ու տղայ են, ու երկուքն ալ հի-
 ւանդ : Իրենք պիտի նային իրարու . և
 սակայն ո՛չ մէկը միտին բան մը ընելու
 կարող : Մալը պառաւ մըն է , աչքերը
 տկար , հիւանդութիւնն ալ կը չարչրկէ
 անցոր մարմինը , գամելով զինքը բազմո-
 ցին վրայ և դատապարտած որ ազօտ աչ-
 ունները յառէ դաւկին , մէկ հատիկին
 վրայ , ու . . . սպասի գիշատիչ սպառու-
 մով : Տղան . . . սպառած արդէն , նուրբ
 թափանցիկ կաշի մը ունի միայն իր ու-
 կորներուն վրայ . բարկցած , ծռմուկած ,
 ներս ու դուրս քշուած , հագիւ կ'երերայ
 ստուերի մը պէս :

Աչքերս քիչ մը դէն ծռելով, անկիւն-
 ները կը նայիմ : Սենեակը արուեստա-
 նոց ալ է . նկարչի թուղթեր հոս ու հոն ,
 փոշին նստած է անոնց վրայ : Բայց որո՞ւ
 փոյթ , չէ՞ որ իրենք, կենդանի պատկեր-
 ներ, կը քայքայուին ատ անշունչներուն
 մէջ , և ատ թղթերուն պիտի նային հի-
 վա : Այո, իր մարմնոյն քայքայումը զգա-
 ցողն ալ չէ կրցած անվրդով գիտել իր
 գործիներուն, թուղթերուն խեղճութիւնը,
 որոնք երեսէ ձգուած են, և փոշին կ'ու-
 տէ զանոնք : Եւ Պ. րօսմեանց ատ ցաւե-
 րը կը կրէ :

Լսած էի, ո՛ր, որ Դուրեանի պատկերին նորանշան արարչութիւնը իր դործն եղած էր: Եւ գտնելով հոն՝ կը նայիմ վրան: Դուրեանը չէր փնտռածս, այլ աշխատութիւն մը որ ատ անուան տակ կատարուած էր, և պատկերին վրայ կը նայիմ ատ համոզմամբ: Տասնեւեօթը տարեկան պատանի մըն է նկարուածը, զըւարթ դէմքով, վաղաբոյս մօրուք մը դէմքին ձուարթը կը շրջանակէ, և կարծես, հեգնութիւն մըն է, ահագին հեգնութիւն մը Դուրեանի կտկազին տաղերուն, «բը-բը-բը» և հրատապ հառաչքներուն: Մագերը խնամով պատարաստուած են, ճակատը լայնկէկ, յօնքերը թաւ և թուխ: Իսկ ամբողջութիւնը, գուցէ, Դուրեանէ զատ ամէն դէմք:

Բայց ո՛րչափ յոգնած է խեղճ նկարիչը ատ յօգուածոյ պատկերին վրայ, ո՛ր որ նմանութեան պէս բան մը կայ ըսուած է, վաղած է հոն, տեսածը քաշած է թղթին վրայ. այսօր դժած, հետեւեալ օրը դժածն աւրած, սրբազրնած և դարձեալ աւրած մինչեւ որ պատկերն այժմու վիճակին բերուած է: Եւ հիմա, ինչ որ ալ ըսուի, չէ կարելի ժխտել որ Պարտմեանց, խղճամիտ աշխատողի մը պէս, ըրած է ինչ որ կրնար ընել, և ասոր ոչ որ կ'աւարկէ:

Միայն թէ իրեն կ'ըսեմ որ կարկատուն Դուրեան չտեսնուիր, և սխալը գաղափարին յղացմանը մէջ է ո՛չ թէ իր արուեստին, կապարին գիծերուն, մագերուն գալարներուն և աչքին հայեցումածոցը մէջ: Ատ պատկերը ծախու կրնայ հանուիլ ճիշտ ա՛ն պատկերներու պէս ուրոնք կը վաճառուին առանց անունի, և, եթէ կ'ուզէք, Դուրեանէ զատ ամէն անուն, նոյն իսկ սուրբի մը անունն ալ կրնայ գրուիլ պատկերին տակ:—Ինք կը զարմանար կամ զայրանար գաղտ որ իր Դուրեանը հաւանութեանս գիր եկած չէր. իսկ ես կը հաշուէի թէ ի՛նչպէս աս պատկերը պիտի տրուէր մեզի իբրեւ Դուրեան, և մենք, յառեկով անոր դէմ ին, զիծերուն, աչքերուն, պիտի ծծէինք զինք, ատ անհունի տղան: Եթէ հիւանդ չըլլար խօսակիցս, իրեն պիտի ըսէի թէ մեր բա-

նաստեղծին մեռած օրը՝ անուանի նկարիչ մը, Արքահամ Սաքեան, կը բերուի իւսկիւտարի երիտասարդութեան կողմանէ, որ մեռելին պատկերը գծուի: Եւ սակայն, պատկերահանը տեսնելով որ մեռելին դէմքը բոլորովին եզծուած է, զիծերը քայքայուած, ճղակտոր եղած հիւժախտին բըզըկտոյ ճանկերուն տակ, կը դիտէ երկա՛ր, և հառաչելով կ'ըսէ թէ չկրնար ատ եզծուած դէմքով անեղձ Դուրեան մը նորաստեղծել: Արուեստին անպատուութիւն մը չընելու խղճահարութեամբ՝ կը մեկնի կամացուկ մը:

Բայց ի՛նչ կրնային արժէլ ասոնք, նրկարիչ խօսակիցս ա՛լ ոչ լսելու վիճակի մէջ է և ո՛չ օգտուելու. նայուածքը երկար կը յառէ իր աշխատութեանը վրայ, և վրան գրուած բոլոր յոյսերը, նիւթական ակնկարութիւնները կ'ոչնչանան մի առ մի՝ իրարու ետեւ մարդ ծխածանի նուրբ զիծերու պէս:

Ժամանակը կ'անցնէր. ճնշող օդ մը, խառնուած անխնամ սենեկի մը ազդեղութեանցը հետ, արդէն բաւական ճընշած մեզի. դուրս կ'իլլենք տիկնոջը հետ ցաւովին ապաւորութեան ներքեւ, և կը բաժնուինք, ես՝ դէպի գլորոց կ'երթամ, իսկ նա՝ Բերա՝ տաք օրուան մը քրտինքով և մեր գիւղին փոշիներովը:

Քանի մը օր ետքը Պարսամեանց կը զրէ թէ ինք շնորհակալ է, ալ չուզեր բեւըլլալ թաղին, ուստի կ'ազաչէ որ իր խեղճուկ գաշնակը ծախուի չորս ոսկիի, և ինքն ատ գումարով, զոր պիտի տայ իբրեւ փոխարինութիւն, երթայ մեր Հիւանդանոցը: Պէտք էր որ փութացուէր ատ գործողութիւնը, որովհետեւ, կ'ըսէ, «ոտքերս՝ արդէն ուռել են, և մի քանի օրից չգիտեմ ի՛նչ կը լինի վիճակս»: Աս ու ապրիտի դէպքեր, — աղքատ իյնալ, հիւանդ ըլլալ, Փրկիչ երթալ — հասարակ դէպքեր են կեանքի մէջ: Բայց ի՛նչ կը կրէ մարդ երբ, աս ամենուն հետ խառն, զինքը տանջող չարչարանքի մէջ իր հոգին կարօտովը կ'այրի. կը ըզձայ որ իր ծնած յարկին տակ գանուէր, փոյթ չէ որ խեղճուկ անակ մը ըլլայ ան. կ'ուզէ որ իր վերջին տեսածներն՝ առաջին տեսածներն

ըլլային, ծառ մը տանը զրան առջեւ, զաշտեր քիչ մը անդին, լեռներու շարք մը մէկ կողմ երկնցած: Իրաւ, մարդիկ շատ սիրտփանք թերեւս հայթայթեն պանդուխտ հիւանդին, կրնա՞ն սակայն ցուցնել անոր գիծ մը իր լեռներէն, տերեւ մը իր ծառերէն, շունչ մը իր հովերէն: Եւ Պարսամեանց, բոլորովին կամք ու կարօտ, հիմա կ'ուզէ ասոնք:

Մենք ոչինչ կրնանք ընել, և պառաւ մայրիկն ալ, հիւանդ իրեն պէս, կը մընայ աստին զրեթէ երեսէ լքուած: Եւ եթէ կեանքի վերջին արարուածն է ուր ստուերի պէս կը գոգոջեն ատ երկուքն, մայր ու տղայ, կեանքէն գուրս պիտի ելլեն տարբեր դուռներէ, և մէկը միւսը չպիտի տեսնէ:

ՀՐԱՆԴ

Ֆ Ա Ն Ի

[ԿՈՒՍԱՎԱՅՊ]

Եւ ինչո՞ւ չի սիրեր:

Հազիւ քսան տարեկան՝ Ալեքսանդրիայի ամենէն պզտիկ տոտիկները և ամենէն մեծ աչերը ունէր Փանի:

Աղքատ հօր մը զաւակ, Սէն-Վէնսանտը Բօլի քոյրերու չեղձէն ելած էր, ուր ճրիպպէս մշակած էին միտքը, զարգացուցած սիրտը, և պշրանքի կոկիկ պաշար մը դրած էին այդ խեղճ սիրուն գլխուն մէջ:

Իսկ ինքը, ժորժ, պատուականագոյն երիտասարդն էր զոր երբէք ձանչցած ըլլամ:

Նոյնպէս քսան և քանի մը տարու, բարեկեցիկ, ազնիւ, դեղանի, Ֆանիի հետ միևնոյն փողոցը կը բնակէր:

Իրացնութիւնը, միևնոյն ճամբէ երթեւեկը, պատուհաններու դէմ առ դէմ գտնուիլը, այո՛, այո ամենը, զիրար ատել տալու համար չիտուած չէին. ընդհակառակաւ:

Սիրողի մը սովորական հնարքները բանեցուցած էր. յաւիտենական կապի, ճշտաբան երջանի և բոլոր հոգեւորական պէս բաներ փախապաշտ

էր ականջն ի վար և հէգ աղջիկը իր քսան տարիներու ամբողջ միամտութեամբ ինքզինքը անոր թեւերուն մէջ լքած էր առանց վախի, առանց խղճահարութեան:

Մէ, մի մեղադրէք խեղճ Փանին:

Բոլոր կեանքը չքաւորութեան մէջ անցած, հօրը մեռած պահուն անկէ ստեր՝ բառերը ժառանգած էր.

—Աղջիկս, պատուաւոր եղիր:

Պատուաւոր ըլլալ. այսինքն ոչ կին ըլլալ և ոչ գեղեցիկ, մեռնիլ առանց ապրած ըլլալու, սրտին «լռէ» ըսել երբ ըզգալ կ'ուզէ, հոգիին ականջ չի կախել՝ երբ թռիչներ կ'առնէ, միօրինակութեան մէջ փնտռել հանապազօրեայ հացին կտորը, առանց յայտի, առանց տրտնջալու. ամեն օր, միևնոյն սմբած չըջազգեստը հագնելու ամենալ: Հայելին «կը ստես» ըսել վասն զի աղւոր այտերդ, ճերմակ վիզդ, և խոշոր աչերդ յիշեցնել կուտան: Պատուաւոր ըլլա՛լ, առանց նախանձի ուրիշին երջանկութեան ականատես ըլլալով իղձեր, փափազներ, երազներ չունենալ, երեւակայութիւնը մեռցնել: Պատուաւոր ըլլա՛լ կրակ չի պարունակող վառարանի մը առջեւ չի մսելու չափ: Չոր հացին ըսել «Վառեակ եղիր»: Վերջապէս կ'ուզէք որ պատուաւոր ըլլայ աղջիկ մը, երբ Փանիի պէս կարմիր այտեր, սեւ աչեր, և ճերմակ ականներ ունի:

Ինչ ըսեմ ալ: Եգիպտոսի մեղսակից կլիման, իր հարեանցի կրթութիւնը, ընտանեկան պարագաները այնպէս մը բերած էին, որ Փանի, տարօրինակ կամ աններելի բան մը չէր նկատեր ժորժի հետ կենակցութիւնը՝ որուն վաւերացումը կանխաւ չէին փակցուցած եկեղեցիին դուռը, ճերմակ թղթի մը վրայ գրուած: Ժորժ, ամեն բան տուած էր անոր, գոհարներ, սպասներ, կարասիներ, ծառաներ, վերջապէս դիւրաւիեցութեան ամեն պէտքերը. և այս ամենուն վրայ աւելցուցած էր յոյս մը վաւերացնելու իրենց միացումը, ժորժի հօր մահուընէն անմիջապէս ետքը:

Եւ այս եղանակին վրայ չորս տարի շարունակ երգած էին իրենց սիրոյ մեղեդին:

Ժորժի հետ միևնույն գրասենեակի մէջ կ'աշխատէի, սեղանաւորի մը քով. և այս պատճառաւ իրարու շատ մտերիմ էինք. ինձմէ զաղտնիք չէր պահեր: Բամբակի մը եղանակին հարկ եղաւ որ Ժորժ վերին Եգիպտոս երթար գանձելու համար շատ մը գումարներ զորս մեր վաճառականը փոխ տուած էր հողագործներուն:

Այս պաշտօնը վեց ամիս պիտի տւէր: Իր մեկնումէն քանի մը օր առաջ՝ բարեկամս ինձի՝ ըսաւ.

— Կ'աղաչեմ՝ քեզի, բարեկամ, ամեն ահաւ զլուս թողակիս կէսը Ֆանիի տալու բարեկամութիւնը ընես ինձի:

Ասանկ' առաջարկութիւն մը մերժել, բարեկամութեան դէմ մեղանշել էր. ուստի չի վարանեցայ իրեն ըսելու.

— Բայց, սիրելիս, բոլոր սրտովս, ինչո՞ւ չէ:

Եւ, իրաւ, ամեն ամսուան վերջի իրիկունը 160 ֆրանկի գումար մը կը յանձնէի բարեկամս բարեկամուհւոյն:

Բնականաբար այցելութիւններս երթալով աւելի մտերմական ըլլալ կ'սկսէին. առջի ամիսը քառորդ մը միայն կ'եցայ հոն, երկրորդին ժամ մը և երրորդին՝ ալ չեմ յիշեր որքան:

Քանի մը անգամ, Ժորժի նամակով տուած հրամանին համեմատ՝ քատրօն կամ դաշտահանդէսի տարի զինքը:

Երբէք մտքէս չէի անցըներ որ և իցէ կերպով արատ մը գնել այն եղբայրական կապին վրայ որ պաշտօնակիցս ինձ կը միացնէր, և ասոր համար միշտ յարգանք կը վարուէի իր հոմանիին հետ:

Մայիսի 31ի մը, իրիկունը, Ֆանիի արարթրմանը գացի ամսականը տանելու համար:

Դուռը սովորականէն ուշ բացուեցաւ. երբ ձգել երթալու վրայ էի, ներսէն սաքի ձայն մը առի, և յանկարծ ինքզինքս Ֆանիի հետ գէմ առ գէմ գտայ:

— Կը ներէք, ըսաւ, սպասուհիս երկու օրէի վեր ճամբած եմ, Զէլէթէ՝ շտկելու համար ձեզի վայրկեան մը սպասցնել տուի: Ես ալ ճիշդ թէյս առնելու վրայ էի, գաւաթ մը միատեղ առնելու պատիւը չէք ըներ ինձ:

— Օ՛հ, տիկին, հրաւերներ կան որոնք պատասխանի պէտք չունին:

— Բայց կը ներէք անշուշտ որ զձեզ ննջատենեակս հրամայեմ, ուր արդէն ըսպտաը դրուած է. ձեզի պէս բարեկամ մը չի քաջուելու անշուշտ չէք սրգոյր:

— Ընդհակառակը, տիկին, չեմ ուզեր ձեզ անհանգիստ ընել:

Եւ ննջատենակին դուռը առջեւնիս բացուեցաւ:

Սենեակ չէր այդ, այլ սիրոյ բոյն մը: Անկիւն մը մահճակալը՝ սակեղօծ և տանթէլներու ալիքներու մէջ կորսուած՝ աւելի ղեկուէ մը կը նմանէր քան թէ անկողնոյ:

Ասդին անդին քանի մը բուֆեր գոյնըզգոյն կերպաւ. կրկին վարագոյրներ գլորուած հանգամանք մը կուտային լոյսին: Մահճակալին ճիշդ զիմացը արդուզարդի սեղանը, որուն վրա, սանարեր, խողանակներ, սուփեր, սրուակներ, ժանեակներ, պնակներ, սիրուն փոքրիկ հատորներ, գահարեզներ, բարձիկներ, և ձեռքի հայելիներ, ամենէն սիրուն տակնուվրայութիւնը կը կազմէին:

Կ'երեւայ որ Ֆանի ցորեկը դուրս ելած էր, հոս հոն նետուած կը տեսնէի իր արդուզարդի բեկորները:

Աթոռի մը վրայ սեւ մետաքսէ քօռսէն, և քանարէին վրայ լիւս փօշ. գետինը զոյգ մը անգուտէ սեւ սաքիներ որոնց քով կրակի գոյն ծնրակապեր մտցուած են. քիչ մը անդին՝ գետինը ինկած թաշկինակ մը, որուն վրայ կաթկթած իւն-իւնի բուրումը՝ ճիշդ զեփուռի թանձրացած կտորի մը կարծես վերածած էր այդ երեւակաւական թիւի կտորը:

Գիշերասեղանին վրայ, ձեռնոցները, քօշ-տօշը, և զրամագանակը:

Ամբողջ սենեակին մէջ ձերբեր հոտ մը, կանաչի բնական հոտին խառնուած ըզզըլիւիչ մթնոլորտ մը կ'ստեղծէր:

Ահա՛ դրախտի այդ մանրանկարին մէջ թէյերնիս առինք:

Ֆանի քէք քէ Ծիւէ բէնեուար մը հագած էր, որ շարաճճի կերպով վեր կը հանէր իր մարմնոյն ամեն առաւելութիւնները: Ամեն անգամ որ սիկառէթը

բերանը կը տանէր ծխելու համալը, լայն թեւերը կը ներքին տեսնել թեւ մը որ. . . բայց չէ, չեմ ըսեր, անպատճառ գէշ մըտքի պիտի երթար:

Փոքրիկ սիրուն կահի մը շուրջը դէմ առ դէմ նստած թէյերնիս առինք և բաւական ժամանակ ունեցանք երկու ումտի մէջ տեղ, անմեղունակ խօսակցութիւն մը ընելու:

Վերջի նորաձեւութեանց, թատրոնի, այս ինչ տիկնոջ Զորեքչաբթիին, և այս ինչ պարսնին անանկութեան վրայ և քիչ մ'ալ ժորժի վրայ մեր դիտողութիւնները ընեմք վերջը, մեկնելու հրաման խնդրեցի Ֆանիէն:

— Կանուխ չէ՞:

— Ոչ, տիկին, տունը կերակուրի կ'ըսպասեն. և հաւատացէք որ ո'չ ձեզ ձանձրում և ոչ ալ մօրս զայրոյթ պատճառել կուզեմ: Գիշեր բարի ուրեմն և ցտեղ սութիւն:

Ֆանի մինչև դուռը առաջնորդել ու գից ինձ:

Բայց բակին մէջ ոտքը աթուռի մը հանդիպեցաւ, և խեղճը քիչին բերնին վրայ վար ինկաւ:

— Թեւ, ա՛խ, թեւ, սկսաւ պոռալ:

Ինչ սոսկալի վայրկեան, երեւակայեցէք: Տան մէջ ինձմէ զատ մարդ չ'կայ, ինչ ընելիքս չեմ գիտեր, բեկաբուժութեանէ բնաւ չեմ հասկնար:

Բայց շուարելու ատենը չէր, բան մը ընելու էր խեղճ աղջկան, բայց ինչ: Գիտիմէն վեր չէր կրնար ելնել և « թեւ, թեւ » պոռալով սիրտս կտոր կտոր կ'ընէր: Ինձ ուրիշ բան չէր մնար բայց եթէ դոնէ գինքը իր սենեակը տանիլ և քանադէին վրայ տեղաւորել, մինչև որ երթայի պրացուհայ մը իմաց տալ:

Չի վարանեցայ, և երկու թեւերէն բռնելով օգնեցի իրեն որ քանադէին վրայ երթայ իյնայ:

Բայց նորէն կը շարունակէր իր աղեկաւոր ճիչերը:

Ինչ ընէի, Աստուած իմ, գոնէ նախնական բան մը բրած ըլլալու համար սկսայ ձախ թեւ բարձր ուժով շփել: Օգուտը նըմարելի էր, կամաց կամաց ձայնը կըտ-

րեց և աչքերը բացաւ. առաջին քայլերը դժուարիններն են: Հոգիս ելաւ ամբողջ ժամ մը: Եւ երբ տեսայ որ չըթները ալ չնորհակալութեան ժպիտի պէս բան մը կ'արտայայտէին, խնամատու պաշտօնս վերջացած համարեցի և կամաց մը ըսի:

— Կարծեմ, տիկին, քիչ մ'աւելի հանգիստ էք:

Երեսո նայեցաւ ակնապիշ և ժպտելով:

— Այո, չնորհակալ եմ, բայց գիտէ՛ք, դուք ժամէ մը ի վեր ձախ թեւ չիւնելու վրայ էք, մինչդեռ ցաւցուցածս աջ թեւ էր:

— Վա՛յ. . . :

Բայց ալ չեմ գիտեր ինչպէս եղաւ, սա կը յիշեմ միայն որ մայիս երեսունը մէկին, իրեն ստակ տանելու պաշտօնս երբ աւարտեցաւ, արդէն յունիսը քանի մը ժամէ ի վեր սկսած էր:

* *

Շատ տարիներ անցան այն դէպքէն ի վեր, և այսօր այս նորավէպը գրելովս, որուն համար թերեւս անբարոյական ածականը պիտի տան անոնք, որոնք բարոյականի վրայ ինձմէ տարբեր նկատումներ ունին, այս վերջիններուն հաճոյք մը պատճառել կ'ուզեմ, այսինքն ամեն զրուածէ բարոյական մը հանել:

Աւասիկ ուրեմն այս նորավէպէս հանած բարոյականս: «Ամեն անոնք որ կը ճամբորդեն, և ասդին կնիկ մը ունին, ստակ զրկելու չեն անոնց:»

Յ. ԱԼՓԻԱՐ

ՎՐԱՆՆԵՐ

ՄԱՍՏՍՆՈՒ ԶՈՒՐՋԸ

Տէվէ-Պօյնիի կուշտն ի վեր կը մագըցինք, Մատաուի պզտիկ քոյրը որու ձախ թեւին տակ՝ հարաւի կողմէն՝ վեր կը շտակէ իր սրբապաշտ իրանը. ուշ մնացեր ենք, իրիկունը ծովակի ամբերուն մօտ

պիտի գիշերենք ու արեւն արգէն արեւ-մուտք կը վազէ կոհակ, կաթնաթոյր ամպերու մէջ իր մաղերը ցանած. թոյլ հով մը կը զլորի լեռնէն և ձախ կողմի խորունկ ձորակին մէջ կը թաւալի որու անմիջապէս եզերքէն կ'անցնինք, խորո'ւնկ այնչափ որու յատակը չերեւիր՝ այլ միայն անկէ հոսող առուի մը խշրտուքը կը լսենք: Էջ ու չորեպան լեզունքներին դուրս ձգելու չափ յոգնած սաստիկ՝ ոտքի վրայ հագիւ կ'երերան, վայրի ամայութիւն մը ամեն կողմ, լեռներու խառնիճաղանճ գագաթները որ կը ցցուին ու իրենց վիթխարի ստուերները որ իրար կը ծածկեն փոխադարձ, սեւցած քարերը որոնք այդ լեռներու միակ զարդերը կը թուին և ընդհանուր լուսութիւնը որ վայրագ նկարագիր մը կուտայ անոնց:

Բոժոժներու ձայնը էջերու վզէն կախուած՝ երկար կոտորած արձագանգ մը կ'արթնցնէ այդ ամայի լեռներուն մէջ և ամբակներէ դէպ ի ձոր զլորող քարերու ջախջախուած գահաժիթումը կը լուրի վարէն. ձայն ձո'ւն չի կայ. յանկարծ գիշատիչ թռչուններ կ'երեւին լեռան մէկ ծերպէն կամ ժայռի մը ձեղքերէն՝ սեւ վայրի՝ այն ապառաժներուն պէս ուր իրենց բոյները կը հիւսեն ու հետաքրքրի, թեւածելով հանգարտ մեր գլխուն վրայ՝ կ'երթան, կ'անհետին յանկարծ նորէն անշուկ:

Օղակողոր օծի շաւիղէ մը կ'ելլենք դէպ ի գագաթ խոնջ ու անուժ սրունգներու վրայ, ջինջ ու սառնորակ աղբիւրներու կը հանդիպինք քարի մը տակէն քամուող, որ կը զլորին լեռն ի վար երկար երակներու պէս հողին մէջ կորսուելով ուղիին անձուկ զարձուածքներէն մերթ Ուշ-օշի դաշտը կը տեսնենք իրիկնապահի նուրբ մուխի մը մէջ որ դաշտին վրայ տարտամօրէն երկնցած կը մնայ. դեղնած արտերը կը սարսուան ու կը գալարին և իրենց վէտվէտումները մինչեւ կուգան կը հասնին մեզի. գիւղերը արտերուն մէջ սողոսկած կորսուեր են գրեթէ. իրենց երգիքներուն կապոյտ ծուխերը միայն կ'երեւին քուլա քուլայ որ օդին մէջ հանգարտ կը կենան սիւններու պէս:

* * *

Տէվէ-Պոյնիի սարահարթին վրայ այն ինչ ոտներն ուղիղ կը կանգնին և խոնջած իրաններու վրայ ալքայքայուած ողները կը շտկուին՝ առաջին տկար քայլով մը ահա վրանաբնակ քիւրտերու ընտանիքի մը մէջ ենք:

Ասոնք խմբակներ են որ ծիծեռնակի թեւերով գարնան ետեւ կը վազեն, բոյներնին միշտ հո'ն ուր աղբիւր և դալարի տեսնեն իրենց դուռարին ու շատ թէ քիչ յարմարելի դիրք մըն ալ իրենց համար. այսպէս, Ծաղարպապաի ու Մաստառի շուրջը քսաններով կը համրուին միեւնոյն ընտանիքէ գրեթէ ամենքն ալ՝ որ ամբողջ իմարերդ կը կշտացնեն իրենց պանիրով. հօտը իբր հարստութիւն և իշուկի մը քամակին վրայ ալ մի վրան՝ կ'երթան այս տարագնաց ընտանիքները միշտ հոն ուր գարունը կը բուռնի:

Վրանները քսանի կը մօտենան որք խլուրդներու բոյնէն գուրս ցայտած հողերու երեւոյթով՝ բնական անսեթեւեթ ընդօրինակութիւն մը ցոյց կուտան, գորչ անոնց պէս ու բրգաձեւ, ոչխարներու գլաթէն հիւսուած միակ իրենց ձեռարուեստը թերեւս՝ այնչափ պարզ որչափ իրենց աչքերու պահանջը և անարուեստ որչափ իրենց ճաշակը, նախնական հովիւ մարդուն անուպայ կենցաղն ու տիպը կը պահեն իրենց ներքին ու արտաքին ամբողջ նկարագրին մէջ:

Վրաններէ ներս խնամք կամ հագածութիւն մի՛ փնտռէք. ծակծկած թաղիքի կտոր մը գետինը, կաթնամօն ու կաթնայ, ջրի կուժ ու փայտէ շերտի, մածնաման ու սերի պնակ՝ ամենքն ալ վրանին մէկ անկիւնը նետուած իրարու վրայ կամ ետեւ, բռնջին շարվարը հոս, չորսը հոն, անկարգ ու անճաշակ. ահա՛ անոնց ամբողջ ընտանեկան տոտաղձը:

Անվարտի լոճեր արեւահար սրունգներով՝ ամենքն ալ ոտքի վրայ, մէկ տարեկանները նոյն իսկ, կը խաղան՝ ընկողմանած դամբուին ոտներուն տակ. դամբուեր խելահաս քուռիկի հասակով պտուկեր են հանգարտ ստուերներու տակ, զլուխնին ոտքերնուն վրայ դրած, անհեթեթ մուտուքով մը կիսախուփ թարթիչներու

տակէն անտարբեր դիտելով անուշայ լա-
ճերուն ամեն քմայքները . այդ լաճերը ,
ճնճկուկի ձագերուն չափ անպաշտպան ,
որոյ փետուրներուն փոխան լոկ կտաւէ
չապիկ մը ունին երկար մինչեւ կրունկնե-
րուն վրայ :

Հօտ ու հօտալ արօտավայրէն կը դա-
նան . հովիւը սրինգը մէջքը, ցուպը ձեռ-
քին մէջ ճամբուն քարերուն զարնելով
փոշիի թեթեւ մշուշի մը մէջէն հօտին կ'ա-
ռաջնորդէ . այս առաջին նախիրն է ու
գեռ հեռուն ցրուած խումբեր կ'երեւին
որ հովուին մեղամաղձիկ սրինգով կը հա-
ւաքուն լերան մէկ անկիւնէն , քարին
մէկ ճեղքէն . հազիւ վրաններու մօտ, ա-
մեն մէկը իր կարգին կ'ապասէ որոշ տեղ
մը ուր քրդուհին կովկիթը ձեռքը, սկսի
կիթել անոր գիրուկ ծիծերը :

Կիներն աւելի գործունեայ՝ պանիր ու
փէլ կը շինեն էրիկներու ապրուստը ճա-
րելով, որք միայն շուքի մը տակ շաշու-
ու լէլէն կը քաշեն երկար լաշու մը ձը-
գած : Կիներու վրայ ալ ցեղային զուտ
տարազ մի՛ փնտռէք՝ կարմիր վարաքէն
զատ սրու ծալքերը ծալ ծալ պէտք է
թափին կրունկին վրայ , մաշած առան մը
կարճուկ մինչեւ ծունգը , շապիկին մա-
սերը զուրս ելած քղանցքներուն դարվեր
բացուածքէն , ուլունքներու անճաշակ ա-
մեն գոյներէն վզնոց մը լանջքերէն դար
վար՝ տհա ամբողջ պերճանքը այս հովիւ
կիներուն . ամեն մէկն իր ճակտին մէջ-
տեղն ու ստորին չըթուներին ետեւը ասե-
ղով ձեծուած սեւ նշաններ ունի որ թե-
րեւս միայն իրենց աւանդակուն հին սո-
վորոյթներէն մնացած ըլլան :

Այս արեւու տակ ծրոյ՝ անկո՛ւ բար-
բերու մէջ սակայն բնական պարզու-
թեան հետ՝ զիմային այնպիսի թարմ գե-
ղեցկութիւն մը կը ծաղկի որ հեռու քա-
ղաքացիի չափուած գեղեցկութիւններէն՝
մինակ իրենց մէջ կ'ապրի ջինջ ու յստակ
այն առուներուն պէս ուր իրենց գէմբը
կը գիտեն . բնառնեկան կենցաղ շատ
հաշտ պայմաններու տակ՝ կ'ապրին հա-
մաստ այդ ամայութեանց մէջ՝ ծաղկիւնե-
րու պէս որք կը ծաղկին , կը բուրեն ու
կ'անցնին տառնց մէկէ մը տեսնուելու :

Հեռացիր ենք արդէն բաւական այդ
գեղջուկ վրաններէն , այլ սակայն մերթ կը
դառնամ ետեւ՝ նայելու անոնց որ կա-
մաց կամաց կը կորսուին ա'լ մեր աչքե-
րէն :

Խարբեր : ՌՈՒԲԷՆ ԶԱՐԻԱՐԵԱՆ

ԱՐԶԱՄԱՐԶԱՆՔԸ

Զէ՛ , շատ զըմբատ չեմ երբ այսպէս
Զիս կը լըքես խոտմաղջաւճ .
Արին չերթար իմ սըրտի'ցս ,
Յաւը չըներ հոգիս փուշ փուշ :

Սիրուիլը չէ որ կուտայ մեզ
Միշտ սիրելու տենչանքն անուշ ,
Եւ սիրողին ճըշմարտապէս՝
Կայ լըքուիլ կանախ կամ ուշ :

Բայ ի երբ , օր մը , դուն աղւոր կին ,
Քու սիրելոյդ ականջէն վար ,
—Սա խեղճ տղան ալ իմ հորս դին

Պըտրտկեցաւ խենդի պէս յար , —
Ըսես՝ ամփոյթ հին սիրոյդ դէմ ,
Այն օրն , ես շա՛տ , շատ զըմբատ եմ . . . :

Գ Ս Ր Ն Զ Մ Ա Ն Ը

Իմ սըրտիս խորն , ըստուերի տակ ,
Գերեզման մը կայ միմաւր՝
Ուր Թաղուած է հոգին յըստակ
Կոյսի մ'որ գիս սիրեց մէկ օր :

Մարմինն անոր կ'ապրի ճիմակ
Պիղծ տենչիւն մէջ նորանոր . .
Բայ իր հոգին՝ նուրբ ու ճեղմակ՝
Գեռ կը նիրհէ իմ սըրտիս խոր :

Արցունք մը տա՛յ՝ զոր ոչ մէկ յայտ
Գր չորցընէ՝ կը կախուի յար
Անոր վերեւ , գերդ ջահ անլոյս .

Եւ իմ հոգիս , հեռա՛նդ , տը'տալ ,
Ծունդի իջած , սուրբ հաւատ չով
Կ'աղօթէ միշտ այն շիրմին քով . . . :

ՊԱՆԱՆ ՄԱՆԷԶԵԱՆ

ՃԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ս. Պատրիարքը երեքշաբթի կէսօրին Մազրիգիւղէն Ղալաթիա անցնելով, խորհրդարանին մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Քաղ. Ժողովի ատենապետ Մազուտ Սիւմնի պէյի, գերատեսնապետ Եուսուֆեան՝ Տիգրան Էֆէնտիի, Տիգրան Էֆէնտիի Կիւմրիզ-կէրտանի և Ունճեան Աբիկ Էֆէնտիի հետ։ Այս տեսակցութենէ յետոյ, Ս. Պատրիարքը Հայրը իր բնակարանը վերադարձաւ Մաքրիգիւղ։

— Ս. Պատրիարքը Հայրը անցեալ կիրակի Դատական և Կրօնական գործոց նախարարին ապարանքը գնաց ի Բուսէլի Հիսար և տեսակցութիւն մը ունեցաւ Վսեմ. Բիշափաշի հետ։

— Ալաշկերտի Ս. Յովնանէս վանքի թանկագին անօթներուն վանականներու ձեռքով գողցուիլը արգէն յայտնի է։ Հետզհետէ կ'իմացուի թէ գողցուած սըրբութիւնները կարծուածէն շատ աւելի են։ Գողցոնները երբեմն կը գտնուին, երբեմն ալ կը կորսուին։ Այժմ ալ կ'ըսուի թէ գողցուածներուն մէջ է Ս. Գրիգոր Լուսաւորչի մատենքը որ դետեղուած էր զուտ ոսկիէ ձեռքի մը մէջ։

— Ազգ. Կեդրոնական վարժարանի շրջանաւարտներուն քննութիւններն սկսած են և պիտի շարունակուին մինչեւ ամսոյս վերջը։ Ազգ. առաջնակարգ ուսուցիչներ և եկեղեցականներ, մասնաւոր հրաւերով, ներկայ կը գտնուին քննութիւններուն և շատ գոհ կը մնան։

— Երուսաղէմէն կը գրեն Աբե-էլի թէ Ֆրանչիսկեան կրօնաւորներու ընդհանուր արբանայրը որ այժմ Երուսաղէմ կը գըտնուի մայիս 24ին այցելած է մեր վանքը, բայց Տ. Յարութիւն Պատրիարք Բեթղէհէմ գացած ըլլալուն, փոխանորդը Տ. Երեմիա եպիսկոպոս ընդունեւ է զայն։ Երկու օր յետոյ Պատրիարքը փոխադարձ այցելութեան գացեր է։

Իսկ մայիս 20ին ուսումական ընդհ. հիւ-

պատուր և մայիս 26ին Յունաց Պատրիարքը այցելեր են մեր վանքը։

Ն Ե Ր Ք Ի Ն

Մեր ջերմ շնորհաւորութիւնները կը մատուցանենք Ներքին գործոց նախարարի խորհրդական Վսեմ. Ահմէտ Բէֆիգ պէյի որուն Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ շրնորհել առաջին կարգի Օսմանիէ պատուանշան։

Այս բարձր գնահատում պայծառ ապացոյց մըն է Ներքին գործոց Վսեմ. խորհրդականին այն ազնիւ ձիրքերուն որ բոնացմով սիրելի և յարգելի եղած է իր շուրջը գտնուողներուն։

Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ նաեւ երկրորդ կարգի Օսմանիէ պատուանշան շնորհել ապագրական տեսուչ Վսեմ. Պէհ-ճէթ պէյին և երրորդ կարգէն միևնոյն պատուանշանը տեսուչի օգնական Վսեմ. Հըֆիլի պէյին։

Այս շնորհները, որոնց արժանացած են իրենց փափուկ ու կարեւոր պաշտօնին մէջ ցոյց տուած կարողութիւնովին, բերկրութեամբ ողջունուած է բոլոր տեղական մամուլը կողմէ և Մաաֆ յօժարութեամբ իր խնդակցութեան բաժինը կը մատուցանէ իրենց։

— Դատական պաշտօնեայ մը երգում ընելէ յետոյ թէ չպիտի գործէ արդարութեան հակառակ գործ մը, չպիտի դատնուի անհաւատարիմ Վեհ. Սուլթանին և իր բարձր պետութեան, երբ հակառակ ընթացքի մը մէջ գտնուի, այն ատեն կառավարութեան պաշտօններէ խալառ պիտի վաճառուի։ Այս է կայսերական նոր հրամանի մը տրամադրութիւնը։

— Համազգային Անկեղանոցը շուտով շինելու համար ճարտարապետը գործաւորներուն թիւը աւելցուցած է։ Շէնքին հսկող յանձնախումբն ալ ամէն օր շինութեան վայրը կ'երթայ աշխատութիւններուն առաջ երթալը հաստատելու համար։

— Հայ-կաթոլիկ երիտասարդներու կողմէ ի նպատակ Համազգային Անկեղանոցին տրուած ներկայացումն արտագրած է 7580 դրուշ։ Այս գումարը յանձնուեցաւ Ներքին գործոց նախարարութեան գտնձապահին։

— Վեհ. Սուլթանը հրամայեց որ առանց յապաղումի շուտով Մեքքէ գրկուին աղքատ ուխտաւորներուն սահմանուած օգնութիւնները : Էլզաֆի պաշտօնատան մէջ կազմուած յատուկ յանձնաժողովը փութաջանութեամբ կ'աշխատի բացած նուազուրդները ժամ առաջ վերջացնել և ուտելիք ու ուրիշ պիտոք Մեքքէ հասցնել :

— Մահաւոր հեռագիրներու նայելով, ձիտտէի մէջ և շրջակայքը մինչև հիմայ քղերա չկայ : Ի Մեքքէ, ուր այժմ 200 հազար ուխտաւոր հաւաքուած են, համաճարակէն բռնուած անձերուն թիւը բազմաաւելած աննշան է : Մնաց որ, համաճարակը թեթեւ հանգամանք մը ունի :

— Քոլերան հետզհետէ կը նուազի Պատրայի մէջ :

— Կայսերական Իւզէպօլէ դիւանան և որ ձիտտէ պիտի տանի Մեքքէ կրկնապէս բժշկներն և զեղագործները :

— Ֆիումէէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ, Տրէզուի առողջապահական համաժողովին պայմանագրութեան համաձայն, քարանձինա տնօրինուած է Արարիայէն և Կարմիր ծովէն անդ գացած նաւերուն համար :

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Փերմանիոյ մէջ ընտրութեանց արդիւնքին նայելով, կը կարծուի որ նոր Բայնսդակին մէջ 25 ձայնի մեծամասնութիւն մը պիտի ըլլայ ընդդէմ զինուորական օրինադրին :

— Անգլիա հետզհետէ կը զօտայնէ իր ազդեցութիւնը Պելուճիստանի մէջ որ կը գտնուի Աֆղանիստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Օմանի ծովուն միջև և որ ռազմագիտական տեսակէտով մեծ կարեւորութիւն ունի Հնդկաստանի համար : Անգլիա անձայն աննշուկ կը աւարածէ իր քօղարկեալ տիրապետութիւնը այդ երկրին վրայ :

— Յունիս 6/18ին ի Մանրէլիէ երեք հազի քրեւոյէն մեուր են հիւանդանոցին մէջ :

— Նաբոլի պանքային Հռոմի ճիւղին տնօրէն Պ. Գուչինիէլլօ, որ 2,450,000

ֆրանք կոկորդն անցուցած էր, տասը տարուան բանտարկութեան և 5000 ֆրանք տուգանքի դատապարտուեցաւ, միանգամայն հատուցանելու իր իւրացուցած գումարը և դատական ծախքերը, բաց աստի, անարժան յայտարարուեցաւ ու և է հանրային պաշտօն վարելու երբէք :

— Ֆրանսական թերթ մը կ'ըսէ թէ Պ. Թիւրքէն որ մեիքիթի հնարիչն է, պատերազմական նոր գործիք մը հնարած է զոր տանելու համար կը բաւեն 4 մարդ և երկու ձի : Այս գործիքը մէկ քառորդի մէջ 5 անգամ կրնայ պարպուիլ և նետել 25 հազար գնտակ, 3,500 մեթր հեռաւորութեամբ, և ծածկել 22,000 քառակուսի մէթրօ տեղ :

— Շիգակոյէն կը հեռագրեն թէ Յուլահանգէսին մէջ աշխատող 3000 բանոր ձամբուր են : Կը վախճուի որ Յուլահանգէսին համար կառուցուած հաստատութիւնները սնանկանան :

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Արիւսաւապոլիս	ՄԱՅՈՍԻՏ	ԷՖ.	ՍԱՆՏԱՅԱՆԵՆ
Ձիւռնիս	ԿԱՐԱՊԵՏ	,,	ՄԱԼՃԱՆՆԵՆ
Խարբերդ	ՌԻԲԷՆ	,,	ՁԱԳԱՐԵՆ
Կիրասն	ՅԱՐՈՒԹԻԼԵ	,,	ՄՈՒԹԱՅԱՆՅ
Մալկարա	ԱԵՏԱՇԼՍ	,,	ՅԱՐՈՒԹԻՆՆԵՆ
Նիկոմիդիա	ՄԻՂՄԵՆ	,,	ԱԹԱՆԱՅԱՆ
Ռօտտմօ	ՏՕՔԹՕՌ	,,	ՆԵՎՐՈՒՉԵՆ
Տրապիզոն	ՅԱԿ Բ	,,	ՇԱՐԱՐԵ

Մ Ա Կ Ա Ր Ա Ն

10 Յունիս

ԸՆԹԱՅԵ ՓՈՆԱՆԱՆԱԳՐՈՅ

Ներք ափս Լոնտոնի վրայ	110 5
» Բարիդի »	22 90

Բանադուտ	24 3
----------------	------

Բանադուտը Յամանիէ	—
-------------------------	---

ԸՆԹԱՅԵ ԱՐՎԵՐԳՐՈՅ

Բանադուտ Արաի A 56 B 34 —	(23 12
---------------------------	--------

ԲԱՆԱՆՏԱՐԱՐ

Երկրանուրի 8) Բարմաւէյ 550	Ռէժի 17 2)
----------------------------	------------

ԸՆԹԱՅԵ ԳՐԱՄՈՅ

Օմս. Ոսկի	100	Անգլ. Ոսկի	110 18
Մէնիս	18	Եմբէրիալ	90 20
Մանր արծաթ	103	Քրիմից	51 17
Մէթալիք	98	Բուպի թուղթ	8 64
20 ֆր.նոց	8. 19	Թատֆիլի	—

ԱՐՏՈՆԱՏԻՐ Կ. Ս. ԻՐԹԻԻՃԱՆԵ

Ի Տպարանի ԱՐԵԻՆԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ քաղաք